

282 July  
1123

h. 52

A 656





88

1895

1895

Дозволено цензурою. Тифлисъ, 4 Августа 1895 г.

1895



1123-2016  
№ 1123

## Կ Ե Ղ Ե Ք Ի Չ

### ՎԵՊԻԿ

Կողմէյ Չուկսինը նոր էր օրուայ հաշիւը տեսել և ուզում էր փակել խանութը, որի նշանատախտակի վրայ գրուած էր. «Այստեղ վաճառում և գնում են ամեն տեսակ իրեղէններ». հէնց այդ ժամանակ խանութի շեմքում երևաց մի կնիկ՝ գիրկն առած ծծկեր երեխային:

— Ուշացել էք, տիկին: Ժամի ինն է,— ասաց նա, խէթ հայեացք ձգելով սեղանի ետևից:

— Բայց խանութդ բաց է դեռ... — անփստահ կանգ առաւ նրա առջև:

— Ի՞նչ անենք որ բաց է... իսկոյն փակելու եմ... Ի՞նչ էք ուզում:

Ուզում եմ գրաւ դնել, ահա, — և հին գրաւիս շահը վճարել, եթէ ոչ՝ իրեղէններս կկորչին:

— Պահում էք մինչև վերջին օրը, — մրմուռաց նա աւելի անբաւական: Մի՞թէ չէիք կարող աւելի վաղ բերել: Կարծեմ ինքներդ էլ գիտէք:

— Ի՞նչ կարող էի անել: Յոյս ունէի, որ այս երեկոյին փողոս կտանամ... Գնացի մօտը և աղաչեցի... Վերջը՝ ճարահատած ստիպուեցի նոր գրաւ բերել ձեզ մօտ...

Եւ յանկարծ, Չուկսինի համար բոլորովին անսպասելի կերպով՝ կինարմատը նստեց աթոռի վրայ և սկսեց լաց լինել: Չուկսինը նայել անգամ չուզեց: Մատները թմբկածելով սեղանի վրայ՝ սպասում էր, թէ ինչով կը վերջանայ այդ, մի և նոյն ժամանակ հաշտում էր, որ նոյն օրը վաթսուէն երկու մանէթ զուտ արդիւնք է ունեցել, և գրաւից չը թափած իրեղէններ էլ մնացել են մօտը մինչև երկու հարիւր մանէթի: Այս գումարի էլ համարեա կէսը զուտ արդիւնք է: Բախտաւոր և աջողակ օր: Եթէ ամեն օր այսպէս լինէր. — Ի՞նչ հրաշալի բան կը լինէր: Ծշմարիտ է, նրա կողքի խանութներում ջհուգները շատ յաճախորդ են խլում նրանից, իրաւասուներն ևս սկսել են գրաւականով պարտք տալու սնդուկներ բանալ, բայց նա, Չուկսինը, աւելի շատ է տալիս,

դրա համար էլ չքաւորները նրա մօտ աւելի յօժարութեամբ են գնում: Մէկ էլ որ՝ նա աւելի շատ ժամանակ է տալիս գրաւները թափելու համար, քան թէ միւսները: Փռք Աստուծոյ, դեռ կարելի է մեծ վաստակ ունենալ այս առուտուրից: Ա՛յ, եթէ Մօչալովսիու տանից եղած աղան չը թափէր մանեակներն ու ապարաջանները, որ գրաւ է դրել ամիս ու կէս առաջ, այն ժամանակ Կօռնէյ Սաւվիչը մուտքում կարող էր գրել ամբողջ երկու հազար, իսկ երկու հազարը նրան միայն տոկոս կը տար ամսական հարիւր մանէթ, եթէ ոչ աւելի էլ: Չուկսինն այս մտքերի մէջ ընկղմելով՝ մոռացութեան էր տուել նորեկ կնամարդին, այնպէս որ նրան դուր չեկաւ, երբ կինարմատն ինքը խօսեց.

Հանգուցեալ մարդիս նա պարտ էր: Միշտ ասում էր՝ որ կտայ, ես էլ յոյս ունէի:

— Այդպէս... «Յիմար կնիկ, կարծես տանը չէր կարող ունալ, եկել է այստեղ», այսպէս էր մտածում:

— Փողը վերցրած ժամանակ՝ պատկերի դիմաց երեսին խաչ քաշեց: Իսկ հիմա. «Գնա, ասում է, ես չը գիտեմ այդ ի՞նչ հարիւր լիսուէն մանէթ է, որ իբր թէ ես պարտ եմ ձեզ»...

—Նա ուղիղ է ասում, եթէ առանց գրի է տուած, ասաց Կօռնէյ Սաւվիչը:

—Էլ ինչ գիր էր պէտք, քանի որ նա Յոհաննէս Մկրտչի անունով երգուել էր ասելով. «Եթէ չվճարեմ՝ թող ինձ պատժի իմ անուան հրեշտակ Յոհաննէսը», և երկրպագել էր մինչև գետին:

—Մարիկ, պատկերը հօ չէս կարող տանել դատարան, կամ նրանից ինչ կարելի է պահանջել:

—Ի՞նչպէս չէ կարելի, բորբոքուեց կնամարդը:—Խղճով խօսենք. կահաւորած սենեակին տալիս է երեսուն մանէթ. հագին ունի մոխրագոյն ցանցաւոր հագուստ, երկու ձեռք հագուստ էլ պահարանումն է կախած—ինքս տեսայ աչքովս—մի ձեռքը բաց գունանի, իսկ միւսը մի քիչ մուգ կլինի և զօլզօլ է...

—Ուրեմն ձեր սեփական յիմարութեան պատիժն է, որ հիմա կրում էք: Դուք այս ասացէք, ինչ ունիք այդտեղ մօտներդ: Ես ժամանակ չունիմ ձեր գործերը քննելու...

Կինարմատը իր թաշկինակով սրբեց աչքերը, և այդ ժամանակ թաշկինակը ցած քաշուեց, և մի փուռ մազ փուռեց ճակատի վրայ: Յետոյ նա ախ քաշելով կարգի բերաւ գլուխը և մօտեցաւ սեղանին:

—Երևում է, պէտք է կորչինք, ուրեմն էլ նրանից ոչինչ չը պիտի ստանամ:

—Պէտք է որ այդպէս լինի... իր թշնամին ո՞վ է, որ գիր չը լինի տուած և փող վճարէ:

—Հապա Յոհաննէս Մկրտիչը:

—Յոյց տուէք, էլի ինչ ունիք, կոշտութեամբ ընդհատեց նրան Կօռնէյ Սաւվիչը:

—Ես ձեր յիմարութեան համար չեմ կարող կանգնել մինչև առաւօտ:

Կինարմատը մօտ քսանուրթ տարեկան էր, ինքը լղարած և նուազած: Դէմքի մանր գծերը սրսրատուել էին, միայն աչքերն էին մնացել զեռ գեղեցիկ: Նա այդ աչքերով նայում էր Զուկսինի վրայ, չուզենալով նրա գուրթը շարժել, թէև ամենայն օգնութիւնից զրկուած էր զգում ինքն իրան:

Թէ ինչ մարդ էր Կօռնէյ Սաւվիչը՝ ամենքին յայտնի էր, և ինչքան էլ յիմար էր այդ կինարմատը՝ բայց նրա գլխումն ևս չէր ծագել մի այսպիսի անտեղի հեծեծանք մի անգուրթ մարդու առջև: Նրա լացը գալիս էր, արտասոււնքը թափւում էր առանց նրան հարցնելու: Նա ձեռքը տարաւ գրպանը և այդ շարժումով զարթեցրեց երեխային: Երեխան ժաժումաժ եկաւ, աչքերը բաց արաւ

լոյսի առջև, առաջ ճպճրպացրեց մի քանի անգամ և յետոյ սկսեց անթարթ նայել լոյսին՝ կարծես զարմացած:

Կօռնէյ Սաւվիչը երեխայի վրայ էլ նայեց տհաճութեամբ, որով ուզում էր ասել. «Այդ էր պահաս. իրանք լափելու ոչինչ չունին, դեռ երեխէք էլ են ցնկնում»...

— Ես նրան ասում եմ, — սկսեց էլի իրանը լիմար կինարմատը, որ կարօտ էր սրտի փղձուկը դուրս թափելու, — ես նրան ասում եմ. «Վախեցէք Աստուծուց, ես երեխայ ունիմ», իսկ նա թէ՛ «իսկ ես ինքս կարելի է թէ ինչքան երեխէք ունենամ ցանոտած»: Եւ յետոյ ինձ այսպէս բռնեց ուսերիցս, երեսս շրջեց դէպի դուռը, և դեռ ոտքով էլ հրընդեց...

Չուկսինն ինքն էլ այդպէս կանէր մեծ բաւականութեամբ, — այնքան ձանձրացաւ նա այդ կինարմատից:

— Իսկոյն, իսկոյն, ասաց նա, տեսնելով իր արած վատ տպաւորութիւնը Չուկսինի վրայ: — Ել ի՛նչ, ահա իմ բոլոր ունեցած չունեցածս, ինչ որ մնացել է:

Եւ տուաւ Սաւվիչին մի փոքրիկ թղթէ ծրար:

— Ուզում էք գրա՞ւ դնել, թէ ծախել:

— Ոչ... գրաւ եմ ուզում դնել: Ո՞վ գիտէ, գուցէ նա ուշքի կգայ և կվճարէ: Ես էլ կը թափեմ իմ գրաւս: Ամեն օր աղօթք կանեմ Յոհաննէս Մկրտչին, որ վախեցնի նրան երազումը կամ մի ուրիշ կերպ:

Չուկսինը ժպտաց, ջոկեց նշանադրութեան ոսկի մատանին ու ծումռած ոսկի խաչիկը արծաթի գգալից ու նոյնպէս արծաթի ապարանջանից, որի վրայ գրուած էր. «Կրիր և յիշիր», կշռեց մինը և միւսը, յետոյ բերաւ փորձաքարը, արքայօղին, ոսկին քսեց քարին և թաթախեց օղիում, որ տեսնէ «խակահան է արդեօք»... Նա արդէն ուզում էր նորից փաթաթել ոսկին, այդ ժամանակ երեխան, որի աչքի առջև այնպէս ուրախ փայլ էր ստացել ճրագի լոյսի տակ՝ ձգուեց դէպի պսպղուն առարկան և փափուկ ու թաց թաթիկով բռնեց Կօռնէյ Սաւվիչի մատից բոլորովին անսպասելի կերպով:

— Դուք էլ ի՛նչ էք գուր տեղը քաշ տալիս ձեզ հետ ձեր երեխէքը, — ուզում էր բարկանալ, բայց նայեց երեխայի վրայ:

Երեսը հազիւ մի բռան չափ, բայց նրա վրայ վառուում էին թուխ թուխ ու միամիտ աչքերը, այնպէս միամիտ, որ ահամայից ժպտիտ էին երեցնում մինչև անգամ Չուկսինի

չորացած շրթունքների վրայ: Ունքերը դեռ  
չէին բուսել, դրա համար աչքերն աւելի ծի-  
ծաղելի էին դառնում: Գլխի վրայ, կորնթարդ  
ճակատի վերևում շէկ մազիկներ նօսր ու  
խաշար: Այս բոլորը շատ տարօրինակ էր թը-  
ւում Կոռնէյ Սաւվիչին, նա երբէք նայած  
չէր երեխի երեսի վրայ:

— Ինչո՞ւ է այսպէս նայում երեսիս...

Իսկ ինքը մատը բռնել է կշեռքի վրայ,  
որ չխլի երեխի թաթիկից, որով նա բռնել  
էր իր ունեցած բոլոր ուժովը: Չէ իմանում,  
դրա համար հայհոյի՞ կինարմատին թէ ոչ...  
Ինքը դեռ չէր որոշել իր ստացած զգացու-  
թիւնը:

— Յիմար է դեռ... Պաշուտկա՛, թո՛ղ ա-  
պօրը... Թո՛ղ...

— Աղջիկ է:

— Այո... վեցերորդ ամսումն է:

— Այդ ինչո՞ւ է պնօշներն այդպէս ա-  
նում:

Պաշուտկան պնօշները կլորացրել էր և  
երկարացրել: Այսպէս նա ձգւում էր դէպի  
մի կողմ: Զգուեց-ձգուեց և յետոյ յանկարծ  
բաց արաւ պնօշները և ծիծաղեց, — այնպէս  
ծիծաղեց, որ Կոռնէյն ինքը հետաքրքրուեց-

— Տես տես... սա էլ է էակ... բայց ա-

ւելի վատթարները կան... Այս մէկն ունիս  
միայն:

— Մէկը... Մարդս միայն տարի ու կէս  
ապրեց ինձ հետ:

— Այդպէս... Հիմա ի՞նչքան էք կամե-  
նում:

— Իրուս եկէք շահը ահա այս ստա-  
ցագրով, և էլի երեք մանէթ շնորհեցէք:

— Չեմ կարող, — աւելի ըստ սովորութեան  
կտրեց Կոռնէյ Սաւվիչը... Ամենևին չեմ կա-  
րող... — Էլի նայեց մէկ անգամ փոքրիկ թա-  
թիկի վրայ, որ այնպէս պինդ բռնել էր նրա  
մատը... — Տէ՛ս, տես, կարծես թելի վրայ լի-  
նի շարուած բոլոր յօդերով, սրա եղունգնե-  
րին նայեցէք, ինչքան ծիծաղելի են: — Չեմ  
կարող... այս անգամ ոչ այնքան վճռական  
ասաց Չուկսինը, բայց իսկոյն էլի զսպեց ին-  
քըն իրան: — Ի՞նչ է տնում սա էլ: Մատն  
արձակեց երեխայի ձեռքից: — Մանէթ ու կէս  
հրամեցէք...

— Խղճացէք ինձ, աղաչեց կինարմատը  
նուազած ձայնով: Իրութիւնս մեռնելուց էլ  
վատ է: Մտէք իմ դրութեան մէջ:

— Ես չեմ կարող դրութիւնների մէջ  
մտնել: Այդպէս որ անեմ՝ ինքս էլ պարկն  
ուսիս՝ կընկնիմ դռնէ դուռը:

Եւ նա սառնասիրտ նայում էր արդէն, երբ Պաշուտկան սկսեց էլի երկարացնել շըրթունքը խողովակաձև և աչքերը ճպճպացնել ճրագի վրայ:

— Ի՞նչ անենք հիմա, — յուսակտուր բացաբանչեց կինարմատը: — Ես մանէթ ու կէս պիտի տամ տանտիրուհուս, որի տան մի անկիւնումն եմ ապրում:

— Եւ կտաք էլի:

— Իսկ ուտել, խմել...

— Հրամեցէք երկու մանէթ: — Եւ, այլ ևս չսպասելով նրա համաձայնութեանը՝ Չուկսինը իրեղէնները շարտեց արկղի մէջ և սկսեց դրել ստացագիրը:

— Գոնէ երկու և կէս...

Բայց նա չը պատասխանեց անգամ. հրնացած ու իւրոտուած կաշուէ թղթապանակից հանեց երկու մանէթ, լուսումը տնողեց ու տուաւ կինարմատին:

— Գոհ եղէք Աստուծուց, որ դեռ տուտան առաջուց չեմ դուրս գալիս... Իմ կարգումը եղած ջհուգը շահն այս գլխից դուրս կգար... ինչպէս կամենաք...

Իսկ ինքը հաշուում էր. սրա իրերը ութ մանէթ կարժեն: Եահը՝ առաջուայ իրերի համար՝ վեց արասի է: Այի՛նչ, էլի օգուտ կայ:

— Գոնէ երեխայիս համար...

— Ես ուրիշի երեխանց համար դեռ փող չեմ աշխատել... Գնացէք, զնացէք, տիկին, ժամանակ է կողպելու:

Էլի մէկ անգամ նրա աչքումը պսպղաց երեխայի կլորիկ երեսը նրա կոճակի նման քթովը, և մի րոպէից յետոյ Կոռնէյ Սաւվիչը արդէն փակում էր դուռը ծանր փակով:

II

«Իրանք մերկ ու սոված, էլի երեխէք են ծնում», մտածում էր ինքն իրան Կոռնէյ Սաւվիչը, շրջուելով անկողնի մէջ: Նրա բնակարանը միւսնոյն տեղն էր, ուր էր և խանութը, այնպէս որ ննջարանի դռնով մտնում էր խանութը: Չուկսինը վաղուց էր արդէն բնակաւորուել այստեղ. սկզբներումը շուն էլ էր պահում մօտը — վախենում էր, բայց յետոյ հաշուեց, որ շունը կերակրելը փող կարժէ, և ծախեց: Իր գործն սկսեց մի քանի հարիւր մանէթով. սկզբումը ինքն էլ էր փող պարտք անում զանազան այրի կանանցից և պաշտօնաթող աստիճանաւորներից: Նրանց տալիս էր երկու ու երեք տոկոս ամսական, իսկ ինքը

վերցնում էր տասը: Սրանից էլ սկսեց իր հարստութիւնը: Ժամանակը հրաշալի էր, չէ թէ այնպէս, ինչպէս հիմա է,— ոչ մի մրցող չունէր: Երեք տարուց յետոյ իր մօտ փող բերողներին այլ ևս չէր ընդունում, իրանը բաւական էր: Դիմում էին նրան քէֆ սիրող իւնկերները և Կոռնէյ Սաւվիչը քերթում էր նրանց իր ուզածի պէս: Տալիս էր մի մանէթ և առնում տասը մանէթի մուրհակ,— կէսը վճարին՝ էլի աշխատանք էր... Գործը շարունակուում էր այսպէս մինչև այն ժամանակ, երբ իր կարողութեան կէսը պարք տուաւ մի ջահէլ իշխանիկի: Իշխանիկը մուրհակի վրայ տուաւ նրան և իր հօրեղբօր ստորագրութիւնը, հօրեղբօր, որին շատ լաւ էր ճանաչում ամբողջ Պետերբուրգը: Կոռնէյ Սաւվիչը շատ լաւ էր իմանում, որ ստորագրութիւնը կեղծ էր, բայց մտածում էր այսպէս, թէ ազգականները թեթեամիտ պատանուն Սիբիր հօ չեն ուղարկիլ, ուրեմն կը վճարեն նրա պարտքը... Եւ եթէ Չուկսինի յոյսն արգարանար՝ նա հիմա մի քանի հարիւր հազարների տէր կը լինէր: Բայց իշխանիկը չը խոստովանելով հօրեղբօրն իր արարմունքը՝ խաբեց Չուկսինին, ինքն իր ճակատին գնդակ խփելով: Կոռնէյ Սաւվիչի լաւ միտն է, թէ

ինչպէս վազեց ինքն այդ ժամանակ նրա բնակարանը... Այնտեղ էր արդէն ոստիկանութիւնը: Ննջարանումը, փափուկ գորգի վրայ, ձեռքերը մեկնած, ընկած էր իր պարտապանը: Միայն քունքի փոքրիկ վերքից արիւն էր հոսում, ու բաց աչքերը զարմանքով նայում էին առաստաղին, որտեղ, ուղիղ նրա վերեւից, կախուած էր կապոյտ լապտերը... Յիշում է Կոռնէյ Սաւվիչը հասակաւոր մի տիկնոջ, որ դիակի կողքին բազկաթուղումը նստած՝ լաց էր լինում, և բարձրահասակ ծերունուն, որի սպիտակ և երկայն մօրուքը ծածկել էր ամբողջ կուրծքը... Սա ինքն էր հօրեղբայրը... «Իմ փողն ո՞վ պիտի վճարի հիմա...»:— «Ա՛, այդ դ՛ու ես, Չուկսին, — շուռ եկաւ դէպի նա ծերունին...— Դ՛ու ես սրա սպանողը...» Յիշում է նա մօր կսկծալի անէծքը, յիշում է, թէ ինչպէս ոստիկանապետը դուրս արաւ նրան բնակարանից և ինչպէս յետոյ, երբ ուզում էր մուրհակովը մըտնել դատարան՝ քիչ մնաց իրան էին ուղարկում որս անելու Սիբիրում: Հազիւ արձակեցին նրան: Այս անգամ նա մեծ զրկանք կրեց, փողիցը ձեռք վերցնելով, բայց սրա վրէժն սկսեց հանել յետին թշուառութեան մէջ ընկածներից, կողոպտելով նրանց անխնայ:— Ա՛,

դուք ուղղում էք օրէնքով, շատ լաւ, ես էլ օրէնքով կը տեսնեմ իմ բանը»,—չարախընդութեամբ մտածում էր նա, մերժելով որ և իցէ կնկան տալ նրա գրաւը՝ եթէ մի օր անցած էր լինում պայմանաժամից... «Ինչ, գանգատուիր»,—բղաւում էր խեղճերի վրայ: Այսպէս չորանում էր նա սեղանի ետևում, ինչպէս պառաւած բողոճը պատածակերում, ինքն էլ չիմանալով վերջումը, թէ այդքան փողն իր ինչին էր պէտք: Թէ ինչով էր ապրում ինքը՝ հազիւ թէ կարողանար պատասխանել Կոռնէյ Սաւվիչը: Օրը երկու անգամ մօտիկ թէյարանից թէյ էր վազեցնում նրան մի տղայ, դիմացի խանութից էլ ապուխտ ու հաց էր առնում, և այսքանով էլ կուշտ էր: Հագնում էր իր մօտ գրաւ մնացած և հնութեան պատճառով չը ծախուած շորերը: Տանից շատ հազիւ էր դուրս գալիս: Պատահում էր, որ գլխումը ծագում էին «զանազան մըտքեր», ինչպէս ինքն էր անուանում. նա, ոչ առանց բաւականութեան, մտածում էր, որ ինքը փող ունի, և եթէ ուզենայ՝ կարող է թոյլ տալ իրան «յատկութիւններ», այսինքն լաւ կերակուր ուտել և լաւ շոր հագնել: Նոյն րոպէին հաշուում էր, թէ այդ ինչ կը նստէր իրան, և գրում էր իբրև արդէն ծախս

527  
(282) 1123-2010



արած, և յետոյ այդ միւլնոյնը կրկին աւելացնում էր փողի վրայ և գրում իբրև մուտք: Մէկ անգամ, պատահմամբ, իր պարտապաններից մէկը նրան տարաւ թատրոն. բայց Կոռնէյ Սաւվիչը քնեց այնտեղ, և երբ հիւրասիրողը յանդիմանեց նրան՝ նա գլուխը թափ տալով պատասխանեց. «Սա իսկականը չէ»...—«Ի՞նչպէս թէ իսկականը չէ, հարցրեց բարեկամը:—«Այնպէս, սա իրականութիւն չէ: Նայիր այն դերասանուհուն, տես ինչպէս փոխում է: Մի՞թէ դրանք ուղիղ լաց են լինում: Ուղղում ես տեսնել, թէ կնանիքն ինչպէս են լաց լինում՝ եկ ինձ մօտ մէկ օր, իմ սեղանիս մօտ նստիր, այնտեղ կը տեսնես և կլսես: Ինձ մօտ կատարուող տեսարաններն աւելի գրաւիչ են. գալիս են ամեն կարգի մարդիկ, և իրանց խաղի համար ես չեմ նրանց փող տալիս, այլ նրանք են տալիս ինձ... Իսկ այս իսկականը չէ... Այստեղ այդ կնիկն ահա իբր թէ լաց է լինում...»

Եւ իրաւ, Կոռնէյ Սաւվիչը մարդկային բոլոր թշուառութիւններին հանդիսատես էր լինում իր սեղանի մօտ նստած, և դրանից մի առանձին հաճոյք էր զգում: Եւ այդ բնական էր, քանի որ նա այդ թշուառութիւններովն էր ապրում, հարստանում էր աղբա-



տուրթեան և սովի հաշուով:— «Խաչ ունիս վրագ, ո՞վ դու մարդուն սաղ սաղ մաշկող», բղաւում էին երբեմն կողոպտուածները»:— «Ինքք չունիս վրագ խաչ, սառնասիրտ պատասխանում էր Չուկսինը, — որովհետև ահա ինձ մօտ գրաւ է քո խաչը»: Այսպէս սաղ սաղ մաշկող կամ մարգ քերթող անուներ դառաւ նրա մշտական մականունը: Այս բանից նա չէր էլ նեղանում, նրա համար միւսնոյն էր: Ինքը լաւ էր իմանում, թէ ինչ բան է քաղցը և ինչ՝ անտուն անտեղ թափառելը: Քանի որ դեռ ճորտ էր և ծառայում էր իր տիրոջ տանը՝ նրան դուրս արին, որ երթայ ինքն իր գլուխը պահի, և նա ոտքով գնաց Պետերբուրգ, ոչ ոք նրան ոչ մի օգնութիւն չարաւ, ոչ ոք նրան չուտեցրեց, չխմեցրեց: Իսկ երբ որ ինքն ուժ ստացաւ և կարողութիւն՝ խղճալ ում և իցէ՝ նրան թուում էր մի տարօրինակ բան:— «Օգնիր ինձ, եղբայր», — աղաչում էին նրան:— «Քնն, գնն. գնա ուրիշ տեղ որոնիր եղբօրդ», — դուրս էր անում խեղճերին:— «Բայց, տէս, Աստուած կպատժի քեզ», — սպառնում էին նրան:— «Նա ինձ պատժելու պատճառ չունի»: Այսպէս ահա Կոռնէյ Սաւվիչը ապրում էր, կարծելով, որ ոչ մի պարտիք չունի ոչ առ Աստուած և ոչ

առ մարդիկ: Շունը ծախելուց յետոյ նա բուրդովին մնաց մէն մենակ և ամբողջ երեկոներ նա անց էր կացնում ջոկջկելով և թափ տալով մօտը գրաւ եղած հագուստեղէնը, մաքրելով ոսկեղէնն ու արծաթեղէնը, տնտրելով թանկագին ակնեղէնը մի առանձին հաճուքով: Չուկսինի համար դրանք մեռած չէին: Ամեն մի իրեղէն խօսում էր նրա հետ իր մասին: Ոչ մի անգամ նրա մաքրովը չէր անցնում, թէ արդեօք ինչո՞ւ համար է հաւաքել այդ բոլորը, ինչո՞ւ համար է ապրում ինքն աշխարհումս և ինչ պիտի լինի յետոյ: Նա ծերացել էր և հիմա արդէն սկսել էր զաւամել, շարունակ վաշխառութեան մէջ, կարծելով թէ էլ մի ուրիշ կեանք չկայ իր համար և կարող չէ լինել:

III

«Ծնոտում են, ծնոտում երեխէք, իսկ յետոյ...»  
 Եւ Կոռնէյ Սաւվիչը էլի մէկ անգամ շուռ եկաւ անկողնի մէջ:  
 Ի՞նչ է պատահել արդեօք նրան այս անգամ. քնել է միշտ հանգիստ, թէև շատ

զգաստ: Մի փոքր շշուկն անգամ լսում էր նա քնի մէջ, և հէնց կրկնուէր թէ չէ՝ նա իսկոյն վեր կթուչէր տեղիցը և ականջ կը դնէր ու կնայէր մթութեան մէջ: Նա չէր վախենում յարձակմունքից՝ որ և է տեղից: Ապրում էր միայնակ, կողպէքներն ու նիգերը յուսալի էին, բարձի տակին էլ լիքն ատրճանակ ունէր պատրաստած՝ անակնկալ դէպքի համար: Վախկոտութիւնից չէր, որ իրա մէջ զարգացած էր զգաստութիւնը, այլ իր պարապմունքի յատկութիւնից: Այսու ամենայնիւ նա այս գիշեր ինքն իրան մի անսովոր վիճակի մէջ էր զգում: Գլուխը տաքանում էր, կարծես բարձից ճնշուելով: Ամեն օրուայ պէս չէր, քէՓը տեղը չէր: Նա վառում էր ճրագը, բայց այսպէս քսւնը չէր տանում. հանգցնում էր և աչքերը խփում, որ էլի իսկոյն զարթնի մի անսովոր շփոթութեան մէջ: Արդեօք ինչ անսովոր բան է պատահել: Նոյն օրը նրա գործերը լաւ էին գնացել: Տոկոս շատ էր ստացել, շատ իրեղէններ էին մնացել առանց թափելու, դրանց մի մասն արդէն ծախել էր լաւ գնով: Անհաճոյ բաներ չէին եղել, եթէ չհաշուենք անգործ սպասաւորին, որ նրան անուանեց կենդանաքերթ: Բայց այս բանը նրա սրտին

չդիպաւ: Նա սովոր էր դրան: Ո՞վ ասես, որ նրան չէր անուանում քերթող, կաշի մաշկող: Ի՞նչ անենք, ամեն ոք իր գործն ունի, իր պարապմունքը: Ուզում են նրա պարապմունքը մարդ քերթել համարել՝ թող համարեն. նա խօս առանց օրէնքի չէ անում այդ: Ով չի ուզում՝ թող չդիմի նրան: Այդ քերթողութիւնն է, որ նրան ուտեցնում, խմեցնում է, առանց քերթողութեան նա էլ նոյն առանց տեղի ծառան կլինէր, նրա պէս գրաւ կդնէր արժէք չունեցող ժիւետը... Ո՛չ, պատճառն այդ չէր...

«Ի՞նչպէս էր նրա անունը՞... կարծեմ Պաշուտկա... Ի՞նչպէս էր բռնել այդ Պաշուտկան նրա մատիցը: Եւ թաթիկն ինչքան փափուկ էր, մանրիկ մատիկներով ու եղունգներով: Եւ ի՞նչպէս պինդ էր բռնել, կպել էր, էլ պոկ չէր գալիս: Ծիծաղելի... պաօշները փողովակ էր շինում և կարծես ուզում էր երկարացնելով հասցնել ճրագին, աչքերն էլ թուխ թուխ էին, առանց ունքերի—նոյնպէս ծիծաղելի: Եկ ասա, դեռ ոչինչ չէ հասկանում: Միւսնոյն է նրա համար, թէ ո՞ւմ մատըն է բռնում, «կեղեքչի», թէ մայրիկի: Գուցէ նրա ձեռքերի վրայ էլ նոյնպէս հանգիստ կպառկէր, միայն թէ առջևը ճրագ

լինէր... հետաքրքրական աղջիկ էր... Եւ ինչո՞վ է կերակրում նրան այդ խղճալի մայրը: Ինքը հազիւ է կարողանում ապրել: Յիմար կնիկը առանց գրի հաւատացել է մի խաբեբայի, որի երաշխաւորն Յոհաննէս Մկրտիչն է: Ո՞վ կվճարի առանց թղթի: Թող դա լինի նոյն իսկ Կոռնէյ Սաւվիչ Չուկսինը, նա էլ առանց թղթի ոչ ոքի պարտք չի տալ և ոչ էլ կը վճարէ: Որովհետեւ կարգն այդպէս չէ: Ամեն բանի համար կարգ կայ: Ի՞նչ դուրս կը գայ, եթէ խօսքին հաւատանք: Փորձիր բըռնել այդ խօսքը. ասացիր, իսկ ասածդ տես ահա որտեղ է, պոչիցը չես կարող բռնել, դէպի յետ գրաւել չես կարող... Երևի ծծով է կերակրում Պաշուտկային... Երևակայում եմ, թէ ինչ կաթը կունենայ քաղցածը: Մանէթ ու կէսը կը տայ տանտիրուհուն բնակարանի համար, իսկ յիսուն կուպէկը ի՞ր կեցութեան համար կը ծախսէ: Դրանից ինչ դուրս կգայ... Ասենք նրա իրերն ութ մանէթ կարժէին... Չորս մանէթ կարելի էր տալ... Բայց իր օգուտն ինչպէս թողնէր ձեռքիցը: Ինչքի նման կլինի այդ: Այն ժամանակ էլ ինչ միտք ունի խանութ պահելը: Հասկանալի է, որ աւելի տալ նա կարող չէր...

25-րդ նոյն քան ժամանակ ապրել էր

և ոչ ոքի չէր սիրած: Բոլորովին ոչ ոքի... Շատ վաղուց մի բան պատահել էր, նա շատ լաւ էր չիշում այդ: Այն ժամանակ նա դեռ ստրուկ էր իր տիրոջ տանը: Մաշան էր, աղախինը... Լաւ աղջիկ էր: Աչիկները պայծառ, պռօշներն ալ-վարդ, աշխոյժ, կրակի կտոր... Ահա թէ ինչպէս էր: Եւ ինչքան ուրախ էր ու գուարթ: Երբ որ ծիծաղում էր՝ ուր ասես հասնում էր ձայնը, և պառաւներն սկսում էին մռթմռթալ. Լսեցէք, լսեցէք, ասում էին, Մաշկա մատակն է խրխնջողը, գրո՞ղը տանի... Կոռնէյն ուզում էր դիմել աղային և ուզել Մաշային, բայց մինչև այս մասին նա կմտածէր՝ աղայի տղան եկաւ Պետերբուրգիցը: Յայտնի է, թէ անուշ պատառն ում է բաժին ընկնում... Վրայ հասաւ ազատութիւնն ստրկութիւնից: Քանի տարուց յետոյ Մաշային տեսաւ փողոցումը հարբած, գջլտուած... Այդպէս էլ պիտի լինէր, ի հարկէ, որովհետեւ տիրոջ տղան ուրուրի պէս խփել էր նրա գլխին և հեռացել: Այդ որ չը լինէր՝ հիմա Կոռնէյն էլ կունենար Պաշուտկաներ... Աչքի առջևը կմեծանային նրանք, փափուկ ու քրտնաթաթախ թաթիկներով կը բռնէին նրա մատիցը և շրթունքները փողովակ շինելով կձգուէին դէպի իրան: Այդ

Պաշուտկաները հիմա մեծացած կը լինէին, և ինչքան խնդում ու ծիծաղ կ'լինէր չորս կողմից և ինչքան աղմուկ, — պիտի անհանգստացնէին միայն, առանց նրանց լուսթիւն և հանգստութիւն է տիրում... Եւ դեռ ո՞վ գիտէ կօզնէին արդեօք իրան: Ոչ, այսպէս աւելի լաւ է. առանց նրանց աւելի լաւ կաշխատուի: Մի բան միայն — եթէ տկարութիւն եկաւ վրան... Միտն է գալիս, որ երկու օր հիւանդ պառկած է եղել, երևի մրսած է եղել: Լսել է, թէ ինչպէս են բարեկիրս եղել դուռը, լետոյ փողոցապահն է ներս մտել, ուզեցել է հիւանդանոց ուղարկել, բայց տասը մանէթ կաշառք տալով՝ աղատուել է... Այո՛, շատ նեղ օրի էր հանդիպել, շատ նեղ: Էլի լաւ է, որ երեկոյին դռնապանի կինը ներս է մտել մօտը նստել, միւս օրը նոյնպէս: Եթէ ոչ՝ երկիւղալի է...

Բայց ինչ, մեռնել միայնութեան մէջ... Ծերանալ, հիւանդանալ և մեռնել...

Գիշերը դարձեալ կմնայ լուռ... Մըկները դարձեալ կշարունակեն իրանց գործը... Եւ ո՞ւմ կմնայ բոլորը: Գործը որ վերջացնէ հէնց այսօր՝ քառասուն հազար մանէթ գուտ գրամ կունենայ: Ի գուր չէ բերթողութիւն արել... Քառասուն հազար,

այո՛... Իսկ ոսկին ու արծաթը, որոնք չը թափուելով մնացել են իրան, մի քառասուն հազարի էլ այդ կը լինի: Միթէ կարող չէ պատահել, որ յանկարծ գան ու յափշտակեն, գողանան: Ինչո՞ւ չէ: Հէնց առաջին մտնողը ձեռքը կը տանէ պահարանը, կը հաւաքէ ինչ կայ չը կայ և դուրս կը գայ՝ ոչ ոքից չը նկատուած: Գուցէ հոգեվարք մեռնողին էլ կը խեղդէ, եթէ նա փորձ անէ վերջին ճիգը հաւաքել և օգնութիւն կանչել:

Բայց այն ժամանակ հիւանդին էլ ոչինչ չէր լինիլ: Պաշուտկան կվազվզէր նրա չորս կողմը մանրիկ ու ճարպիկ տոտիկներովը թմփթմփացնելով, կմօտենար նրան, կբարձրանար մահճակալի վրայ, կսկսէր թոթովել... Ամեն ինչ այնպէս չէր լինիլ, ինչպէս հիմա էր... Նրա մայրն էլ — այդ յիմարը — բայց պէտք է որ բարի և լաւ կնիկ լինի: Անխելք է, բայց անմեղութիւնից է այդ: Վատ կնիկ որ լինէր, Յոհաննէս Մկրտչի վրայ չէր դնիլ իր յոյսը և առանց թղթի պարտք հաւատալ ուրիշին: Ո՛ւր են հիմա այդպիսիները... Եւ լետոյ... թող զար մահը... Ո՞վ չի մեռնելու, ամենքս էլ մահկանացու ենք, այսպէս է սահմանել Աստուած — գոնէ կիմանար, թէ ում է մնալու իր բոլոր վաստակածը... Ամեն ան-

գամ թողած հարստութեան վրայ նայելիս՝ կասէին—Այս մեր հանգուցեալ հօրիցն է մընացել, Աստուած ողորմի հոգուն... Եւ կաղօթէին նրա հոգու համար... Իսկ հիմա ինչի նման է... Ծունը շան պէս էլ կատկի, ուրիշ բան ի գուր կսպասես... Կամ կսկսեն իրար պատմել. «Մեզանում մի կեղեքիչ Կոռնէյ Չուկսին կար...»

Ի՞նչ կարող ես անել, մերկ ու քաղցածներին Աստուած Պաշտականեր է տուել, իսկ նա՛ երևի մարդ կեղեքելով էլ պիտի մեռնի...

Եւ միայն երբ որ վարագուրի միջով թափանցեց մռայլ օրուայ աղօտ լոյսը և սկսեց կռուել ճրագի դեղնափայլ լոյսի հետ և կարծես զարմանալով տարածուիլ բոլոր անկիւններում, որոնցում թափթփած էին գրաւ դրուած ամեն տեսակ փալաս-փլուսներ՝ միայն այդ ժամանակ աչքերը խփեց Կոռնէյ Սաւվիչը և մոռացութեան մէջ ընկղմուելով՝ մրափեց:

IV

Միւս օրը Կոռնէյ Սաւվիչը չէր լիշոււմ, որ անքուն գիշեր էր անց կացրել: Բոլոր տպաւորութիւնները թափուել էին նրանից, ինչպէս ջուրը սագի վրայից: Նա մինչև անգամ աւելի էր անգթացել և կեղեքում էր աւելի անխնայ: Սովորականից աւելի քիչ էր տալիս և անբաւական յաճախորդների վրայ ըզաւում էր, ասելով.

— Գնա՛ ջհուղի մօտ, նա քեզ աւելի կտայ:

Բայց աւանդ, մուշտարիքը գիտէին, որ Մօխիւյ Հիրշմանը, որ նրա կողքումն էր, աւելի վատ էր, այս պատճառով ակամայ նուաճում էին: Երեկոյին (օրը շաբաթ էր) Չուկսինը խանութը վաղ փակեց և գնաց ժամ: Մեծ ուշադրութեամբ լսեց բոլոր ժամասացութիւնը, ձայնակից եղաւ երգիչներին այժափարի, երեսին խաչ էր քաշում շարունակ և ստէպ-ստէպ ծունը դնում, մինչև ժամը դուրս եկաւ, գնաց տուն:

— Նայի՛ր, նայի՛ր, կեղեքիչը գալիս է — լսեց նա ճանապարհին:

Նա չլսելու դրաւ:

— Կոռնէյ Սաւվիչ, իմ ժամացոյցիս հա-

մար, որ քեզ մօտ գրաւ մնաց, գոնէ երկու շահի տուր մի խմելու գին միայն,— դարձաւ նրան մի գջլտուած:

— Քաշուիր, քաշուիր, եթէ ոչ՝ գիտես, հրէն փողոցապահը կանգնած է այնտեղ...

— Այ պատուուիս դու, մարդ քերթող... Եղբայրներ, ժամացոյցիս տուել էի տասն ութ մանէթ, իսկ սրա մօտ հինգ մանէթի համար կորաւ:

Կեղեքիչը լուռ ու մունջ հասաւ տուն, տնտղեց ու շօշափեց փականքները, յետոյ բաց արաւ յետի դռան ահագին կողպէքը, ներս մտաւ, մոմեր վառեց պատկերների առջև, սամաւարը սարքեց և սկսեց չայ խմել:

«Եթէ Պաշուտկան այստեղ նստած լինէր», — որտեղից որտեղ ծագեց նրա գլխումը... — «Ի՜նչպէս կիսաղցնէր տոտիկները, լեզուն թլպլտացնելով»...

Եւ Կոռնէյ Սաւվիչի չորացած ու կնճրոնոտած երեսի վրայ ժպտի պէս մի բան երեւաց... բայց շատ սակաւատեւ:

«Ոսկի ժամացոյցի տէր աղան թափելու չէ իր գրաւը, Կալաշնիկովի տան օրիորդն էլ աղամանդի ապարանջանը թողեց... Փառք քեզ, Աստուած: Ժամացոյցից եօթանասունը հինգ մանէթ դուտ օգուտ կմնայ, իսկ ապա-

րանջանից՝ քիչ քիչը՝ կբարձրանայ մինչև երեք հարիւրը... Ինչքան լաւ է գործ ունենալ աղաների և օրիորդների հետ... Սրանք չեն հայհոյում, ոչ էլ ախ ու վիշ անում: Մէկ էլ տեսնես՝ վազելով կգայ, «Ձլինի՛ թէ ուշացել եմ»... — «Այո՛, պարոն, ուշացել էք, արդէն ծախուել է»... Գլուխը կշարժի, կշարժի, և կհեռանայ սուս ու փուս, քաղաքավարութեամբ:

«Աղջիկ ունեցած լինէի, մեծացած լինէր, ի՜նչպէս կհագցնէի ես նրան, — ոչ մի վաճառականի աղջիկ նրա պէս չէր դուրս գալ:

V

Կոռնէյ Սաւվիչը պատահամբ դուրս եկաւ փողոց:

Յաճախորդներ չկային, նա էլ կանգնել էր իր խանութի դռանը: Արևի լոյսը պայծառ էր, երկինքը անամպ: Չուկսինի միտն ընկաւ իրանց գիւղը:

«Հիմա հունձ կլինին անելիս... Երեկոները երգելիս կլինեն խմբերով. գիւղացու ուրախ ժամանակն է»...

Մտածմունքի մէջ ընկաւ... Եւ այսու

ամենայնիւ շարունակ թշուառութեան դէմ են մաքառում... Ուղիղ է, ապրում են՝ ինչպէս հաճելի է Աստծուն, ոչ որի վնաս չեն տալիս... Բայց միշտ էլ նոյն աղքատն են:

— Է՛յ... է՛յ, մայրիկ, բղաւեց նա, ինքն էլ չիմանալով թէ ինչու:

Այն կնամարդը, որ եկել էր նրա մօտ նշանի մատանին գրաւ դրել՝ կանգ առաւ:

— Այդ ո՛ւր էք գնում այդպէս:

— Գնացել էի վարձուելու...

— Երեխայի հետ:

— Այո՛... — Եւ յանկարծ սփրթնեց... — Կպել է ինձանից, էլ պոկ չի գալիս, մեղայքեզ Աստուած...

— Ո՞վ է կպել:

— Պաշուտկան, ո՞վ... Աստուած մաս չի տալիս սրան, որ աղատուեմ...

— Այդ ի՛նչ էք ասում, ի՛նչ էք ասում...

Չէ՛ որ դուք մայր էք:

— Հապա ո՛ւր երթամ ես սրա հետ... Վեցերորդ տեղն եմ գնում, հէնց որ իմանում են, թէ երեխան էլ մօտս պիտի լինի՝ «ոչ» ասում են, մեզ հարկաւոր չէ»... Մնում է մէկ բան, — պահ տալ գիւղումը: Թող այնտեղ ապրի, իսկ իմ ոռճկիցս կվճարեմ պահողին:

— Բայց սա կմեռնի գիւղումը:

— Հապա ի՛նչպէս անեմ:

Կոռնէյ Սաւվիչը յետ քաշեց թաշկինակը երեխայի երեսից: Նա քնած էր...

— Տէս, տէս, սա էլ է շունչ քաշում:

Պաշուտկան շնչում էր բերանը բաց, քնի մէջ թշերը կարմրել էին: Արևի լոյսը, որ խփեց երեսին՝ նա բաց արաւ աչքերը, կուչ աճեց, բերանն էլ ծռմռեց, որ լաց լինի, բայց յանկարծ փռշտաց և ծիծաղեց:

— Տէս տէս, լուի նման չէ... Իսկ և իսկ լու:

— Լուն էլի լաւ է, ուտել չի պահանջում, իսկ սո՛ւ...

— Դէ, դէ, մի բղաւիր, մրմռաց Կոռնէյ Սաւվիչը: Յետոյ յանկարծ որտեղից որտեղ հարցրեց. — Ինձ մօտ չէլիք մտնել:

— Ի՞նչպէս ձեզ մօտ:

— Ես կընդունեմ երեխայիդ հետ... Ծառայութեան համար... Օրէցօր ձերանում եմ, մենակ եօլա չեմ գնում:

— Իսկ ոռճիկ ի՛նչքան:

— Ես ոռճիկ չեմ տալ: Ինչի՞դ է պէտք ոռճիկը, կուտեցնեմ, կխմեցնեմ...

— Ինչպէս թէ «ինչիդ է պէտք»... Հապա ես հագնել չեմ ուզիլ, կօշիկ է, բան է...

— Այդ ոչինչ, դրա համար գրաւ դրուած փալաս-փուլուս շատ կայ, կըռկես քեզ համար:

— Ձէ, մտամոլոր ասաց կինարմատը...

— Ո՛չ, այնպէս, որ առանց ռոճկի՝ անկարելի է:

— Այդպէս էք ահա դուք... Ես համաձայն եմ երեխայիդ հետ... Ուրիշներն այդպէս չեն ուզում, և ո՞վ կուզենայ: Նա միայն անհանգիստ պէտք է անէ: Մէկ լաւ մտածեցէք, կտեսնէք, որ ես բարերարութիւն եմ անում ձեզ... ձեզում է, կարծեմ, չէ՛է:

— Ինչո՞ւ չճչայ, ճչում է...

— Այ, տեսնո՞ւմ էք: Գիւղ որ ուղարկէք, պէտք է ամսական հինգ մանէթ վարձ տաք, և դեռ ուրիշ ընծաներ էլ:

— Իսկ ինձ ութ մանէթ կտան ամսական:

— Ձէ ի՞նչ, ո՞րտեղ կտան:

— Ամեն տեղ էլ կտան:

— Ութ որ տան, մայրիկս, կպահանջեն, որ հազուստդ էլ վայելուչ լինի, միւս բաներդ էլ:

— Ինչպէս կամենաք, ես անվարձ մշակ չեմ կարող:

— Դէ լաւ, մի մանէթ կտամ... Նայեցէք, թէ չէ կփողմանեմ...

— Մանէթը քիչ է... Հինգ...

— Այ թէ դու էլ խօսք ասեցիր... Հի՛նգ: Ո՞րտեղ է տեսնուած այդպէս բան... Ձէ որ սրան էլ պէտք է կերակրեմ:

Բայց այս ժամանակ երեխան ձեռքն ազատեց և սկսեց մատներով բռնել ու հաղաղել քթիկը, որ դեռ ևս կոճակի չափ էր և նման: Կոռնէյ Սաւվիչը կորացած մատը մօտեցրեց երեխային, նա էլ ձեռքը գցեց և իր ուժի չափով այնպէս պինդ բռնեց և սըլմեց, որ կարծես իր միակ փրկութիւնը նրանից էր սպասում:

— Իսկ դուք քանի՞ տարեկան էք,— յանկարծ հետաքրքրուեց Կոռնէյ Սաւվիչը:

— Քսանը հինգ:

— Առաջ էլ ծառայե՞լ էք:

— Իմ ամուսինս խոհարար էր լաւ պարոնների մօտ... Իսկ ես— աղախնութիւն էի անում տիկին Կուրկոնոսովի մօտ:

— Կարդալ գիտէ՞ք:

— Այո՛:

— Կարող էք և լաւ գրե՞լ:

— Գրում եմ... եթէ հասարակ տնտեսութեան վերաբերելու լինի:

— Մէկ մանէթով կյօժարի՞ք ուրեմն:

— Ո՛չ... Այդ մասին խօսելն անգամ աւելորդ է,— ասաց կինը և ուզեց հեռանալ

արդէն, բայց երեխան բաց չթողեց Կոռնէյ Սաւվիչի ձեռքը, նա էլ ակամայ կանգնեցրեց նրան ասելով.

— Ի՛նչ լաւ, դեռ սպասեցէք, ինչ ունիք շտապելու: Երկու խօսքով խօսմ չի կարելի գործ վերջացնել: Դուք փախչում էք ձեր բախտիցը:

— Մեզ ո՞վ կարժանացնէ բախտի... Այն էլ բաւական է, եթէ օրուայ հաց ունենանք...

— Ի՛նչ լաւ, տես ահա ինչ եմ ասում. միայն այս պէտք է վերջին խօսքս լինի... Ես քեզ կտամ երեք մանէթ, — ասաց Կոռնէյ Սաւվիչը, և կարծես առատաձեռնութիւնիցը վախեցած՝ մատն ազատեց երեխի ձեռքիցը և գնաց իր սենեակը:

Կինարմատը մտածմունքի մէջ ընկաւ... Շեմքի վրայ կանգնեց — կանգնեց, և վերջը մտաւ խանութը:

— Եկար հա՛... Ես շտապելի: Շատ աւելցրի և հիմա զղջում եմ ինքս... Երեք մանէթը հօմ գտնովի չէ...

— Թէյն ու շաքարը ձեզանից կլինի, չէէ՛:  
— Ի հարկէ... Պէտք է ուտեցնեմ... Ինչ որ ինքս կուտեմ՝ նոյնն էլ դուք:

— Ես համաձայն եմ:  
— Ի հարկէ, համաձայն կլինիք... Իր

բախտիցն ո՞վ կփախչի... Զեր ասելով քսանը հինգ տարեկան էք, հա՛:

Այո...  
— Զէք ուզում մարդու գնալ:

— Ո՞վ կառնի երեխայի հետ:  
— Ծեր մարդը կառնի, բայց ինչ ասել կուզի, որ ծեր մարդուց ըռըխներդ շուռ կտաք...

Կոռնէյ Սաւվիչը միւսնոյն ժամանակ մտածում էր. «Սրան կերակրելը ոչինչ չի արժենալ: Գիտէ թէ ինչ բան է խեղճութիւնը, կաշխատի ինչպէս պէտքն է... Ե՛յ, Կոռնէյ Սաւվիչ, ինչ յիմարութիւն ես անում: Ապրել ես մինչև հիմա, առանց մեղքի տակ ընկնելու, մագերդ սպիտակել են արդէն... Հիմա ուշ չէ արդեօք քեզ համար»...

— Ի՛նչ է ձեր անունը:  
Մարեա Պետրովնա... — Կարմրատակեց:

— Ուրեմն ինչ կասէք, Մա՛շա...  
Կինը լռեց և աչքերը վայր թողեց:

— Այս կլինի ահա ձեր սենեակը, — Կոռնէյ Սաւվիչը ցոյց տուեց խոհանոցի կողքին մի սենեակ: Յետոյ ձեռքը նրա ուսին դնելով թափահարեց և ժպտաց, ինքն էլ չիմանալով թէ ինչու:

— Ի՛նչպէս կլորիկ ես... Միայն երեսդ շատ է լղար... Ինչ և իցէ. գնա բաներդ բեր,

— Ի՛նչ է ձեր անունը:  
Մարեա Պետրովնա... — Կարմրատակեց:

— Ուրեմն ինչ կասէք, Մա՛շա...  
Կինը լռեց և աչքերը վայր թողեց:

— Այս կլինի ահա ձեր սենեակը, — Կոռնէյ Սաւվիչը ցոյց տուեց խոհանոցի կողքին մի սենեակ: Յետոյ ձեռքը նրա ուսին դնելով թափահարեց և ժպտաց, ինքն էլ չիմանալով թէ ինչու:

— Ի՛նչպէս կլորիկ ես... Միայն երեսդ շատ է լղար... Ինչ և իցէ. գնա բաներդ բեր,

— Ի՛նչ է ձեր անունը:  
Մարեա Պետրովնա... — Կարմրատակեց:

— Ուրեմն ինչ կասէք, Մա՛շա...  
Կինը լռեց և աչքերը վայր թողեց:

— Այս կլինի ահա ձեր սենեակը, — Կոռնէյ Սաւվիչը ցոյց տուեց խոհանոցի կողքին մի սենեակ: Յետոյ ձեռքը նրա ուսին դնելով թափահարեց և ժպտաց, ինքն էլ չիմանալով թէ ինչու:

բայց երևի մշակին տալու փող չես ունենալ... Առ ահա այս թուղթը... միայն շատ չտաս, երեք շահի որ տաս՝ ամենքն էլ աղաչանք կանեն:

«Այ խեղք, գլխիս նոր ցաւ եմ աւելցնում, ինքս իմ վզին կնիկ եմ փաթաթում... Ե՛հ, ինչ կուզի թող լինի: Քեֆովս չի լինի՛լ իսկոյն դուրս կանեմ»...

VI

Բայց դուրս չարաւ:

Մարեա Պետրովնան այնպիսի կնիկ դուրս եկաւ, ինչպիսին յարմար էր մի կեղեքիչ մարդու և ձեռնտու: Եօթը տարին այնպէս անցաւ, ինչպէս եօթն օր: Նա չէր վատնում և ոչ մի կոպէկ, տանիցը չէր հեռանում և ոչ մի տեղ և ոչ մի ժամանակ. տունը պահում էր շատ կարգին և օրինաւոր, առ հասարակ, ինչպէս ասում էր Չուկսինը, որ նայում էր նրա վրայ անակնթարթ, «Աստծուն մտիցը չէր գցում»: Պաշուտկան մեծացաւ և դառաւ այնպիսի աղջիկ, որի մասին ստէպ մտածում էր Կոռնէյ Սաւվիչը: Պէտք է աւելացնել, որ ինքը մայրն էլ այնպէս լաւացաւ, գիրացաւ ու գեղեցկացաւ, որ սպասա-

ւորութեան մտած օրից երեք տարի անցած՝ վաշխառուն ամուսնացաւ նրա հետ, հաւատալով, որ այդ մասին երբէք չի զոջալ: Մանաւանդ որ ամսական երեք մանէթ էլ գրուպանումը կմնայ, մտածում էր նա, ի նկատի ունենալով՝ որ կնոջ վրայ չի ունենալ աւելի ծախք, քան թէ խոհարարուհու: Այսպէս ահա Պաշուտկան մեծացաւ՝ նրան համարելով իր «հայրիկը», չը կասկածելով թէ երբ և իցէ ունեցած է ուրիշ «հայրիկ»: Տան իսկական տիրուհին նա էր, ինչ ուզում էր՝ անում էր: Բարձրանում էր մթներես Չուկսինի կողինքի վրայ, երբ նա պառկած էր լինում, և քաշքշում նրա խոզամաղ ընչացքները (մօրուք չունէր). թագ էր կենում նրա սեղանի տակին, երբ նրա մօտ մտնում էր մի «գրաւաբեր». իսկ վեց տարին որ լրացաւ՝ մի պատիժ դառաւ փողոցի բոլոր երեխաների համար: Կռիւ էր դուրս գալիս նրանց հետ և յաղթողը յաճախ ինքն էր հանդիսանում: Նրանք էլ իրանց վրէժը նրանով էին առնում, որ կանչում էին ետևիցը.

Կեղեքչի աղջիկ... Ի ու ինքք էլ կզանաս կեղեքիչ:

Սկզբումը Պաշուտկան չէր իմանում «կեղեքիչ» բառի նշանակութիւնը: Բայց յետոյ,

քուչումը խաղալիս, լսում էր յաճախ, թէ ինչ-պէս էին հայհոյում գրաւաբերները, երբ որ դուրս էին գալիս խանութից:

— Խեղդուիս դու, բկո՛ւմդ մնայ իմ ժամացոյցը, անիծեա՛լ կեղեքիչ...

— Պատուուիս դու, կեղեքիչ:

— Սատանի հետ ես կապուած... Իրաւոր կեղեքիչ:

Սրանից յետոյ Պաշուտկան սկսեց մտմբտալ և նեղահալ:

— Իմ հայրիկս բարի է, — պաշտպանուում էր նա երեխաներից:

— Բարի՛ է, ինչպէս չէ... Ի՞նչպէս կարող են բարի լինել կեղեքիչները:

— Բարի՛ է, բարի՛ է, — պնդում էր նա, ոտները գետնին խփելով:

— Նրա բարութիւնը կաշի քերթելն է, ահա՛ թէ ինչպիսի բարի է նա... Սպասիր, կը մեռնի և սատանէքը նրան լաւ կգարգարեն:

Պաշուտկան լաց էր լինում, յարձակում էր անարգողների վրայ և տուն էր գալիս շորերը պատուտորած:

— Սյդ ի՞նչ է, էլի գգգգուե՛լ ես, — հարցնում էր նրան Կոռնէյ Սաւվիչը, գլուխը շարժելով:

— Սյդ ի՞նչ է, էլի գգգգուե՛լ ես, — հարցնում էր նրան Կոռնէյ Սաւվիչը, գլուխը շարժելով:

— Սյդ ի՞նչ է, էլի գգգգուե՛լ ես, — հարցնում էր նրան Կոռնէյ Սաւվիչը, գլուխը շարժելով:

Պաշուտկան լուում էր, գլուխը կախ գրցում և մօր մօտն էր գնում շուտով:

— Մայրիկ, ա՛ մայրիկ... Հայրիկս բարի մարդ է, չէ՛հ:

— Ի հարկէ, էլ ի՞նչ ասել կուզի:

— Հապա ինչո՞ւ նրանք ասում են «կենդանաքերթ»:

— Ինչ ուզում են, թող ասեն, դու մի լսեր նրանց:

— Ո՛չ, ինչո՞ւ են ասում, ինչ բանի համար:

— Նրա արհեստն է այդպէս:

— Ուրեմն նրանք ուղի՞ղ են ասում:

— Քեզ համար նա բարի է, ինձ համար էլ նոյնպէս: Դու պարտական ես յարգել նրան և սիրել:

— Ես էլ սիրում եմ, — ասաց նա տարակուսելով, և սրանից յետոյ երկար ժամանակ հետամուտ էր լինում, թէ չի գտնիլ արդեօք Չուկսինի մէջ կաշուեքերթութեան որ և է նշան: Շատ անգամ նստում էր նրա գիմացը մի անկիւնում, որ տեսնէ, թէ ինչումն է երևում նրա կաշի մաշկերը: Բաց չէր լինում, ժամերն անց էին կենում իրար ետևից, Չուկսինը հանգարտ կանգնած առուտուր էր ա-

նում և ոչ մէկի կաշին չէր մաշկում:

— Ես էլ սիրում եմ, — ասաց նա տարակուսելով, և սրանից յետոյ երկար ժամանակ հետամուտ էր լինում, թէ չի գտնիլ արդեօք Չուկսինի մէջ կաշուեքերթութեան որ և է նշան: Շատ անգամ նստում էր նրա գիմացը մի անկիւնում, որ տեսնէ, թէ ինչումն է երևում նրա կաշի մաշկերը: Բաց չէր լինում, ժամերն անց էին կենում իրար ետևից, Չուկսինը հանգարտ կանգնած առուտուր էր ա-

նում և ոչ մէկի կաշին չէր մաշկում:

«Բա էրբ է քերթում սա»—աւելի էր ընկղմւում մտմտուքի մէջ... Վերջապէս, երկար մտածելուց յետոյ, այն եզրակացութեանը եկաւ, թէ երեւի նա այդ բանն անում է գիշերը: Գիշերը, երբ ինքը քնած է լինում՝ նա գնում է իր արհեստին և կաշիներ է քերթում... Հիմա երեխան այլ ևս չէր նեղանում, որ հօրն անուանում էին «կենդանաքերթ», և շատ խելացի պատասխան էր տալիս. «Նրա արհեստն այնպէս է, որ պէտք է կաշի քերթէ»...

Եօթը տարեկան որ դառաւ՝ ուզեց աւելի լաւ վերահասու լինել այս բանին:

Մի առաւօտ, երբ հայրը դեռ քնած էր— (նրան իր հայրն էր համարում)—Պաշուտկան բարձրացաւ նրա մահճի վրայ, նստեց ոտքերի մօտ և սկսեց համբերութեամբ սպասել... Անակնթարթ նայում էր քնած Չուկսինի վրայ, հարցնելով ինքն իրան. «սա ինչպէս է կաշիները քերթում. բա մարդիկ զրանից ցաւ չեն զգում, և չեն գոռում արդեօք»... Եւ նրա սրտի մէջ մի սարսափ ընկաւ այդ մտածելիս: Հէնց այդ րոպէին աչքերը բաց արաւ Կոռնէյ Սաւվիչը:

—Հը՛, լուի՛կ, բարի լոյս... Եկ ինձ մօտ... Եւ նա ձեռքը մեկնեց. բայց այս անգամ

երեխան փոխանակ սովորականի պէս հօր գիրկն ընկնելու՝ աւելի մօտ սեղմուեց մահճակալի թիկունքին:

—Ինչո՞ւ ես այդպէս կուչ գալիս... Եկ մօտս, Պաշուտկա, շուտ:

Հայրիկ, այս գիշեր դու ո՞ւր ես գնացել:

—Ե՛ս... զարմացաւ նա:—Ոչ մի տեղ չեմ գնացել, այստեղ եմ եղել:

—Ո՛չ, դու սուտ ես ասում... Ես գիտեմ, թէ դու որտեղ ես եղել...

—Դու երազումդ կլինես տեսած, Պաշուտկա:

—Ո՛չ, երազումս չէ... Հայրիկ, դու խօմ կենդանաքերթ ես:

Կոռնէյ Սաւվիչը այնպէս սառաւ, որ մինչև սառոյց կտրեց: Չնայած որ այդ մականուանը նա վաղուց արդէն ընտելացել էր, բայց երբ այդ խօսքը լսեց Պաշուտկայի փափիլիկ ու կարմրիկ շրթունքներից՝ նա տեղն ու տեղը քարացաւ: Չիմացաւ ինչ պատասխան տար, և երկար ժամանակ նայում էր երեխայի վրայ, կարծես պապանձուած:

Այդ ինչ ասացի՛ր, ի՛նչ,—վերջապէս խօսեց նա:

Երեխան էլ երկիւղով էր նայում նրա վրայ այս րոպէին:

— Ինչ ասացիր, հը՞ :

— Այն էլի... Ամենքն էլ ասում են, որ քո պաշտօնն է այդպէս, որ դու կենդանաքերթ ես... Յերեկը տանն ես լինում, իսկ գիշերը գնում ես:

— Ո՞ւր եմ գնում:

— Գնում ես կենդանի մարդիկներին քերթում փողոցներումը... Լսիր, հայրիկ... նըրանք մեծ ցաւ են զգում անկասկած, չէ՛ք... գողում, գոչում են...

— Մարեա, Մարեա...

Մարեա Պետրովնան, որ խոհանոցում թէյի պատրաստութեան վրայ էր՝ ներս եկաւ:

— Մէկ լսիր, տես ի՞նչ է ասում աղջիկդ, իբր թէ ես կենդանաքերթ եմ... Որպէս թէ գիշերները գնում եմ կաշի քերթելու:

— Այո՛, այո՛, — պնդեց Պաշուտկան: Վասկան էլ, Սենկան էլ, Ալեօշան էլ — ամենքն էլ ասում են... Իսկ ես վախում եմ քեզանից, հայրիկ...

— Ի՞նչ ունիս վախենալու, յիմար:

— Վախում եմ...

— Ախր ինչից ես վախում:

— Վախում եմ, որ ինձ էլ ու մայրիկիս էլ քերթես...

— Դէ, գնա կորիր, անպիտան, — չարա-

ցաւ Կոռնէյ Սաւվիչը, սփրթնեց մինչև անգամ, և նրա երեսը այնպիսի չար կերպարանք առաւ, որ Պաշուտկան զնդակի պէս դուրս թռաւ հօր ննջարանից և փախաւ խոհանոց:

Չուկսինը վեր կացաւ տեղիցը ինչպէս մի սև ու մութ ամպակոյտ: Կարծես նրա խիղճն աճել էր Պաշուտկայի մէջ: «Կենդանաքերթ, — ասում են ամենքը, — կենդանի մարդոց կաշին է քերթում... Աղջիկն էլ հաւատացած էր... Ի՞նչ կլինի վերջը. այդ փոքրիկը քանի մեծանայ՝ այնքան էլ պիտի մեծանայ նրա երկիւղն ու ատելութիւնը դէպի Չուկսինը: Կամ թէ իր մանկական օրտի խորքումը թէկուզ սիրելիս լինի նրան՝ բայց ուրիշների մօտ պիտի ամաչի նրանից...»

Օրը կիրակի էր: Չուկսինը, ինչպէս սովոր էր՝ գնաց ժամ: Աղօթք արաւ ամենայն ջերմեռանդութեամբ, մոմեր վառեց, բայց չէր դադարում մտածել Պաշուտկայի փոխուելու մասին: Մինչդեռ ինքը հաշուում էր, որ Պաշուտկան որ մեծանայ՝ կդառնայ իր օգնականուհին: Ինքը մարդու կտայ նրան, և փեսան կշարունակի իր գործերը... Կենդանաքերթ...

Եւ հէնց նոյն տեղը, եկեղեցու մէջ, նըրան թուում էր, որ ամբօխի մէջ մէկն ա-

սոււմ էր. «Նայեցէք մեր կենդանաքերթի վը-  
րայ... Տեսէք, ի՞նչպէս է խաչ հանում երե-  
սին... Արիւնարբո՛ւ»:

Վերադարձաւ տուն աւելի մառախլա-  
պատ երեսով: Բղաւեց կնոջ վրայ: Պաշուտ  
կան քաշուել էր մի անկիւն:

Խանութի մօտով անց էր կենում Չուկ-  
սինի լաւ բարեկամը, եկեղեցու ծերունի տի-  
րացուն: Նրան տեսնելով՝ խանութից դուրս  
եկաւ Կոռնէյ Սաւվիչը:

— Բարև ձեզ, Նիկիտա Նիկանդրիչ, ի՞նչ-  
պէս է ձեր առողջութիւնը:

— Շատ էլ լաւ չէ, Կոռնէյ Սաւվիչ:

— Իսկ ես ուզում էի ձեզ հետ խօսել...

— Ինչո՞ւ մասին արդեօք:

— Իմ գործի մասին:

— Ի՞նչ գործի:

— Ա՛յ, ինչ գործի, — և Կոռնէյ Սաւվիչը  
նայուածքով ցոյց տուաւ իր խանութը: — Մար-  
դիկ բարեհաճ չեն դէպի իմ պարապմունքը:  
Արիւնարբու ես, ասում են... Դուք ի՞նչպէս  
էք կարծում: Մինչև անգամ իմ սեփական  
ընտանիքիս մէջ... Ի՞նչ դուրս կգայ սրանից,  
եթէ մինչև անգամ իմօնքն էլ...

— Ի՞նչ ասեմ: Մարդիկը չար են, այդ

ինքդ էլ գիտես: Ինչի՞դ է պէտք, թէ ինչ են  
ասում... Մեղք են գործում...

— Ա՛յ, ես ուզում եմ ձեր կարծիքն իմա-  
նալ: Այդ ես ուզում եմ նրա համար, որ խիղ-  
ճրս հանգստացնեմ: Յուզուած է խիղճս: Մի-  
թէ ես ում և իցէ կողոպտել եմ... Դուք այդ  
բոլորը լաւ գիտէք. ուրեմն և ասացէք, դուք  
ինչպէս էք հասկանում:

— Ի՞նչպէս դատեմ: Ասուած է. «մի դա-  
տեր, որ չդատուիս. ինչ չափով որ չափէք,  
նոյնով կչափուի ձեզ»:

— Այդ բոլորը շատ լաւ է, բայց ի՞նչ կա-  
սէք իմ պարապմունքի մասին: Միայն ուղիղն  
ասացէք: Վաշխառունների մասին ի՞նչ է ա-  
սուած... Չկա՞յ արդեօք այդ մասին մի որ և  
է ցուցմունք:

— Կայ... Ա.ռ հասարակ ամենքի մասին...  
«Զինչ օգտիցի մարդ, թէ զաշխարհս ամենայն  
շահեսցի, և զանձն իւր տուժեսցէ»... Բայց  
դու մի յուսահատուիր...

Եւ Նիկիտա Նիկանդրիչը անց կացաւ  
գնաց...

«Եւ զանձն իւր տուժեսցէ, այսինքն՝ իր  
հոգին կորցնէ... զինչ օգտիցի... Յիրաւի որ  
ինչ օգուտ, եթէ մարդ բոլոր աշխարհս ստա-  
նայ, հարստանայ, բայց իր հոգին կորցնէ»...

— Ինքն իրան կրկնում էր Կոռնէյ Սաւվիչը: Ի՞նչ օգուտ է, եթէ քո տանն էլ քեզ դազանի տեղ կդնեն: «Չի՛նչ օգտիցի»: Ոչ մի օգուտ...

Այս միջոցին մի գջլտորած մարդ Չուկսինի մօտով անցնելիս՝ գզակը բարձրացնելով բարևեց նրան ասելով.

— Բարև արիւնարբու և կաշի քերթող Կոռնէյ Սաւվիչին... Ի՞նչպէս էք, էլի շարունակո՞ւմ էք կեղեքել առաջուայ պէս, թալանո՞ւմ էք...

— Քաշուելի, քաշուելի, թէ չէ վզիդ...

— Վզերս մերն է, քեզ մօտ գրաւ չեն,

— Ինզաց նա: — Բայց ա՛յ, երբ դուք, պարոն Չուկսին, կմեռնէք՝ ձեր մէջքումն իսկոյն մի բարդի բհիր կցցեն... Ասում են՝ օրէնքով՝ բոլոր քեզպէսներին հարկաւոր է այդպէս անել:

Կոռնէյ Սաւվիչը յետ մտիկ տուաւ, որ տեսնի Պաշուտկան չի՛ լսում արդեօք այդ խօսքերը... Փառք Աստծու, նա այստեղ չէր:

Երբ որ տուն գնաց՝ Պաշուտկան նայեց նրա վրայ միևնոյն վախկոտ և հետամուտ աչքերով:

— Եկ ինձ մօտ:

Պաշուտկան չէ մօտենում, ծածկւում է մօր քամակին: Մայրը յանդիմանում է նրան ասելով.

— Ինչու ես այդպէս անում, յիմար, գնա հայրիկիդ մօտ:

— Չեմ ուզում...

— Ինչո՞ւ չես ուզում:

— Վախում եմ...

Սմբողջ գիշերը մինչև առաւօտ Կոռնէյ Սաւվիչն աչքերը չխփեց:

VI

Միւս օրը նա զարմացրեց բոլորին իր խանութումը:

Տօն օրերը մօտենում էին, ուրեմն նրա պարապմունքի համար ամենանշանաւոր ժամանակն էր: Ինչքան խեղճ մարդիկ կային՝ բոլորն էլ խոնուել էին նրա մօտ ամեն տեսակ իրեղէններով, բայց Կոռնէյ Սաւվիչը չէ ընդունում և ամենքին պատասխանում է վճռապէս.

— Ուր կուզէք՝ տարէք, ես չեմ վերցնում:

— Ինչո՞ւ էք այդպէս անում:

— Այլ ևս գրաւ չեմ վերցնում, բաւական է:

— Կոռնէյ Սաւվիչ, ի՞նչ է արածդ... վախեցիր Աստծուց:

— Հէնց սրա համար է, որ այլ ևս չեմ վերցնում. ձեզպէսների հետ քարշ գալով՝ քիչ էր մնում, որ մոռանամ Աստծուն... Ես ինքս հիմա երեխայ ունիմ մեծացնելու:

Գրաւարերները դուրս էին գալիս փողոց և միմեանց յայտնում իրանց զարմանքը:

— Ի՞նչ է պատահել արդեօք կենդանաբերթին...

— Շատ է ծծել... կուշտ է...

Կոռնէյ Սաւվիչը երեկոյին գնաց ժամ և հանդիպեց այնտեղ ծերունի Անտոնիչին, որին ամենքն էլ հոգեսէր մարդ էին համարում: Անտոնիչը շատ անգամ էր յանդիմանել Չուկսինին, թէ ինչո՞ւ նա անգթութեամբ կեղեքում է խեղճերին: Չուկսինը հիմա մօտեցաւ նրան... Այս անգամ նա ուրիշ ոչ ոքի հետ չէր ուզում խօսել, այլ միայն Անտոնիչի, որ նրա մշտական նախատողն էր:

— Բարե՛ ձեզ...

Անտոնիչը նայեց նրա վրայ նուազած աչքերով և ծիծաղեց:

— Հը՛, ինչպէս ես... Ծծում ես: Մտածիր հոգուդ մասին, միտդ բեր Աստծուդ:

— Ես արդէն մտածել եմ:

— Լաւ չես անում, ոչ, լաւ չէ... Չքաւորներին զրկելը մեղք է...

— Բաւական է... Էլ մի խօսիր, Անտոնիչ: Ես զաղարեցնում եմ... — Եւ յետոյ, նրկատելով ծերունու զարմանքը՝ աւելացրեց. — Ես զաղարեցնում եմ իմ առուտուրը:

— Բողորովի՞ն, — չհաւատալով՝ խէթ-խէթ նայեց Անտոնիչը:

— Ուղիղ է ասածս, բաւական է: Հիմա ուզում եմ հոգուս համար հոգալ: Բացի սրանից, մօտս երեխայ է մեծանում: Լաւ չի լինիլ, որ նա մեր գործերը տեսնէ:

— Այդ ի՞նչ լաւ բան ես մտածել, — ուրախացաւ ծերունին... Շատ լաւ ես մտածել... Ես աղօթք կանեմ քեզ համար... Միայն շատ դժուար է, օ, շատ դժուար կլինի քեզ համար ձեռք վերցնել: Միշտ կթեքուիս, միշտ կճուռիս էլի դէպի հին սովորութիւնդ...

Կոռնէյ Սաւվիչը ժպտաց: «Ո՛չ, չեմ ծրուուրը»:

— Տայ Աստուած... գիտես ինչ. դու ինչ անելու ես՝ ուղղակի արա, մէկ անգամից պրծա՛ւ գնաց:

— Մէկ անգամից... Մօտս գրաւներ կան... Ժամանակ կուզի, մինչև կթափեն: Ինչո՞ւ իմս էլ կորցնեմ:

— Հէնց այդ գրաւներն են, որ կստիպեն

քեզ միշտ միևնույն վիճակի մէջ մնալ, միշտ շարունակել մէկ անգամ սկսածդ:

— Ոչ, այդ չի լինիլ, ես արդէն վճռել եմ...

— Ի՞նչ ես վճռել:

— Ես արդէն վճռել եմ, թէ ինչ պէտք է անեմ... Պաշուտկաս սկսել է վախենալ ինձանից... Ի՞նչ խօսք, որ յիմար է. լսում է «կենդանաքերթ» կարծում է, թէ այդպէս էլ պէտք է լինիմ...

— Գիտես, եղբայրիկս, Աստուած երեսանց ձեռքով է ցոյց տալիս Իրան... Հապա, այդպէս էլ է լինում...

Կոռնէյ Սաւվիչը տանը նստած չայ խմելիս՝ ոչինչ չէր խօսում: Նա լուռ ու մունջ մտածում էր իր անելիքի մասին, և երբ Պաշուտկան պառկեց ու քնեց՝ սկսեց խօսել կրնոջ հետ:

— Դու շատ ես կացել գիւղումը:

— Քեզ յայտնի է... Մինչև տասնեօթը տարիս:

— Ուրեմն շատ բան կլինիս մոռացած... Հարկ կլինի նորից մտաբերել: Երևի լսած կը լինիս — դադարեցնում եմ:

— Ասացին ինձ:

— Ել դուր չի գալիս ինձ... Դաժան պա-

րապմունք է... Պաշուտկայի համար էլ լաւ չէ: Սկսել է վախենալ ինձանից:

— Նա դեռ ի՞նչ խելք ունի որ...

— Ո՛չ, անխելք երեխայ չէ: Նա սրտով իմանում է, թէ որտեղ է ճշմարտութիւնը: Փառք Աստուծոյ, նա այնպէս չի ապրել, ինչպէս ես: Ես ծնողական զգուանք չեմ տեսած... Ես առիթ չեմ ունեցել սէր զգալ դէպի մարդիկը, բայց հիմա Աստուած ցոյց տուաւ Իրան այդ երեխայի բերանով... Այս բանը շատ լաւ է իմանում Անտոնիչը... Ուրեմն թող մեր երեխան գիւղումը մեծանայ: Գիւղումն Աստուծուն չեն մոռանում: Այնտեղ հող կառնենք և Պաշուտկային կբախտաւորացնենք: Եւ ինչքան շուտ վերջացնենք այստեղ մեր գործը՝ այնքան լաւ կլինի: Միայն գրաւականներն են արգելք լինում: Ինչքան էլ շտապենք՝ էլի պէտք կլինի մօտ երկու ամիս սպասել...

VIII

Բայց Կոռնէյ Սաւվիչը չսպասեց: Հանգամանքներն ուրիշ կերպ փոխուեցին:

Միւս օրը ներս ընկաւ նրա մօտ զբացի կօշկակարը և դեռ հեռուից սկսեց զոռալ:

— Միթէ ուղիղ է...  
 — Ի՞նչն է, ուղիղ:  
 — Ուղիղ է, որ դու գործդ դադարեցնում  
 ես: Ես այս րոպէիս լսեցի: Բայց զիտցած լի-  
 նիս, որ օրէնքով դու իրաւունք չունիս:  
 — Դէն եմ գցում, ժամանակ է... Ել չեմ  
 կարող...  
 — Այդ դու գիտես, քո գործն է, բայց  
 իմ ժամացոյցը... Իմ ժամացոյցն ինչո՞ւ պի-  
 տի կորչի...  
 — Փողը բեր, ժամացոյցդ տար:  
 — Ա՛յ, եղբայր սիրելի, ես շահը կբերեմ  
 ինչքան որ հասնելու է... Իսկ ժամացոյցը  
 թող դեռ ընկած մնայ: Առաջ դու էիր մեզ  
 խեղդում, հիմի էլ մենք գիտենք, թէ ինչ  
 կանենք քեզ:  
 — Ոչինչ էլ չէք կարող անել...  
 Նա անցաւ միջնասլառի ետեւը: Մտաւ  
 պահարանը...  
 — Ա՛ն քեզ քո ժամացոյցդ...  
 — Բայց այդպէս թնչպէս կլինի, չվճա-  
 րած...  
 — Այսպէս կլինի ահա... Դէ, հիմա դուրս  
 կորիր: Քո գլուխը չունիմ:  
 — Հապա փողը... չես առնում...  
 — Եթէ խիղճ ունիս, ինձ տալիք փողը

կգցես խեղճերի համար յատկացրած տուփի մէջ:  
 Արհեստաւորը մի րոպէ մնաց ապշած և  
 յետոյ դուրս թաւ գոռածի նման: «Կենդա-  
 նաքերթը գոռել է բոլորովին, — ժամացոյցս  
 տուաւ և փողը չառաւ»... Հէնց որ լսեցին այս  
 բանը՝ բոլոր խեղճերը ներս թափուեցին Կոռ-  
 նէյ Սաւվիչի խանութը: Մարեան վախեցաւ  
 մինչև անգամ:  
 — Դրանք կթալանեն քեզ, կաղքատա-  
 ցնեն...  
 — Մի վախեր—ինչ որ մնայ՝ մեզ էլ է  
 հերիք, Պաշուտկային էլ: Ի՞նչ լաւ միտս ըն-  
 կաւ. մէկ ուղարկիր այստեղ Պաշուտկային,  
 թող ներկայ լինի:  
 Աղջկանը նստեցրեց սեղանի վրայ և նրա  
 ձեռքով յետ դարձրեց բոլորի գրաւներն էլ:  
 Մի շաբաթում վերջացրեց բոլոր գործերը,  
 պատուիրելով ամենքին.  
 — Եթէ խիղճ ունիք՝ փողը գցեցէք աղ-  
 քատների գանձանակի մէջ:  
 Յետոյ Կոռնէյ Սաւվիչը սկսեց տեղափո-  
 խուելու պատրաստութիւն տեսնել: Դուրս  
 գնալուց քիչ առաջ նա տեսաւ ծերունի տի-  
 րացուին և ասաց նրան.  
 — Մեր կողմերն եմ գնում... ժամանակ  
 է, բաւական է: Պէտք է այնպէս անել, որ

Պաշուտկան մեր չորս կողմում բարութիւն տեսնի: Թող առողջարար օդի մէջ մեծանայ և ոչ թէ այնպէս... Աստուծու նմանութիւնն ու պատկերը կորցրի ես այստեղ:

— Գիւղումն ինչ ես անելու, երևի մի նոր առուտողը կսկսես:

— Ո՛չ: Թող կորչի առուտողը: Հողագործութիւն կանեմ: Մեր կողմերում այգեգործութիւնը լաւ է առաջ գնում: Այգի է, մեղուաբուծութիւն է... Աստուածահաճոյ գործեր են: Ո՛չ, հայրիկ, թող մարդիկը մոռանան «կենդանաքերթին»... Հոգիս բուկս է հասել... Հաբա...

Վ Ե Ր Զ



ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅՈՑ ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ

ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Հիմնուած 1880 թուին

ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ ՈՒՆԻ ԱՆԴԱՄՆԵՐ ԻՍԿԱԿԱՆ ՄՇՏԱԿԱՆ ԵՒ ԱՇԽԱՏԱԿԻՑ

Ի ս կ ա կ ա ն ա ն դ ա մ ը վճարում է տարեկան 6 րուբլի

և ստանում է գրքեր 5 րուբլու:

Մ շ տ ա կ ա ն ա ն դ ա մ ը վճարում է միանուագ ոչ պակաս քան 100 րուբլի և ստանում է գրքեր տարեկան 5 րուբլու:

Ա շ ի ս տ ա կ ի ց ա ն դ ա մ ը օգնում է Ընկերութեանը 1) գտնելով անդամներ և 2) վաճառելով Ընկերութեան հրատարակութիւնները:

Օտարաքաղաքացի անդամներին Վարչութիւնը ուղարկում է գրքեր Ընկերութեան ծախքով:

Ընկերութեան անդամ գրուած են՝ Ընկերութեան գրասենեակում (Барятинская улица, д. Гедевановой, контора Общества изданія армянскихъ книгъ) և աշխատակից անդամներէ մօտ՝ Թիֆլիսում և գաւառներում:

Ընկերութեան հրատարակութիւնները վաճառուած են Թիֆլիսում՝

1) Ընկերութեան գրասենեակում:

2) Կենտրոնական գրավաճառանոցում (Головинскій проспектъ, д. Мириманова, Центральная Книжная Торговля).

3) Խիզդեկէլի գրաւաճառանոցում.

Իսկ գաւառներում՝ աշխատակից անդամներէ մօտ:

Գրավաճառանոցներին զեղջ 20%, ճանապարհածախսը Ընկերութեան վրայ:

Կանխիկ կամ վերագիր վճարով գնողներին զեղջ 25%:

Ուսումնարաններին, գիւղական և էժանագին գրադարաններին զեղջ 30%:



24 MAY 2013

25/5/13

ՀՀ Ազգային գրադարան



NL0863063

